

թողիկոսացն, եւ թողեալ էին զլուսազարդ վանորայսն, սփռեալ էին ի գեղորայսն եւ անդեայք եւ այգիք եւ բուրաստանք եւ հօտք խաչանց եւ արջառոց բազմութիւնս ստացեալ էին եւ եղեալ էին իբրեւ զմի ի մեծատանց աշխարհականացն եւ կալեալ էին ի կանանց տանտիկնայս ի վարձու եւ զանուանքն հացթուխ էին եղեալ... եւ զայս ամենայն անկարգութիւնս, զոր գրեցի ի վերոյ, ես ինձէն աւանատես իսկ եղէ... Ձայս ամենայն, զոր ասացի եւ գրեցի, մին մին խափանել ջանայր (Մովսէս) եւ հանել բռնութեամբ ի գեղորէիցն եւ յափշտակել տայր բռնաւորացն զարտ եւ զայգիս նոցա եւ զամենայն կալուածս եւ զտունս նոցա յաւարի տայր առնել եւ զիւրեանքն բռնութեամբ բերէր ի կարգս խստակրօնս մուծանէր: Եւ չատք ոմանք ի կաթողիկոս Մելքին ապաւինելով ոչ կամէին ելանել ի տեղովէ իւրեանց եւ ի կալուածոցն հրաժարել: Տակաւին վարդապետ գոլով առնէր զայս (Մովսէս)» (էջ 296—297):

Մովսէս իրեն եռանդուն օգնական գտաւ յանձին Պօղոս Վ. Մոկացւոյ, որ իրմէ յառաջ արդէն կը շրջէր քարոզութեամբ եւ չինարարութեամբ. զինքը տեսանք 1615ին, որ եկած էր ի նաւակատիւ Եկեղեցւոյ: Առաքել Դաւրիթեցի (291) կը գրէ. «Իսկ երկոքին վարդապետքն՝ Մովսէս եւ Պօղոս եղեն իրերաց ընկերք իբրեւ զսուրբ առաքեալսն Պե-